

## ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

## ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Բազրատունյաց հարստության շրջանի հայ մշակույթի փայլուն ներկայացուցիչներից է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990–1058), որի գրական-գեղարվեստական ժառանգությունը շարունակում է գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Նա եղել է Անիի մշակութային մթնոլորտի վրա ներազդած այն գործիչներից, որոնք հանդիսացել են զարգացած ավատատիրության շրջանը բնորոշող նոր մտավոր հոսանքի արտահայտիչները:

Մագիստրոսի բազմակողմանի ստեղծագործական գործունեությունն ընդգրկում էր նաև երաժշտական արվեստը: Նա հայտնի է եղել որպես շարականագիր և տաղասաց: Ցավոք, այդ մասին վկայող կենսագրական տվյալները չափազանց սակավ են: Սակայն Մագիստրոսի Նամականիում և «Մեկնություն քերականի» երկասիրության մեջ առկա երաժշտությանը վերաբերող հատվածները հավաստում են, որ նա քաջաստեղյակ է եղել թե՛ վանքերում ավանդվող և զարգացող հոգևոր երգարվեստին, թե՛ երաժշտության տեսությանն ու գեղագիտության բնագավառին և թե՛ իր ժամանակի գուսանական արվեստի կենդանի գործառույթին:

Արդեն այն փաստը, որ Մագիստրոսը հիշատակված է շարականագիրների միջնադարյան ցուցակներում, ինքնին ուշագրավ է: Եկեղեցին բացառիկ դեպքերում է կանոնականացրել աշխարհիկ հեղինակների ստեղծած հոգևոր երգերը<sup>1</sup>: Ահա այդ հազվագյուտ դեպքերից է Մագիստրոսին ընծայվող Խաչի նավակատյաց Ե օրվա «Չորս ըստ պատկերի Քում» ԳՁ ողորմյան: Շարականագիրների ցուցակների կազմողները (բացառությամբ այն հեղինակների, որոնք չեն անդրադարձել այդ շարականին, ինչպես, օրինակ, Մարգիս Երեցը կամ Առաքել Սյունեցին) համակարծիք են տվյալ շարականի հարցում: Օրինակ, Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ի համապատասխան գլխում հաղորդում է. «գՉորս ըստ պատկերին՝ Գրիգոր

<sup>1</sup> Շարակնոցում ընդամենը երկու նման դեպք է գրանցված. մեկը՝ Գրիգոր Մագիստրոսի «Չորս ըստ պատկերի Քում» շարականն է, մյուսը՝ Ը դարի կին երգահան Խոսրովիդուխտ Գողթնեցու իր եղբորը՝ Վահան Գողթնեցու նահատակությանը ձոնված Ողբը կամ Գուլքը, որի մասին տե՛ս մեր հոդվածը՝ Վկայաբանություն և Շարականերգություն. Հայկական Ուրծայնի Դ. Դարձուածքի Առեղծուածք. – <Հայկագեան Հայագիտական Հանդէս>, հ. ԻԳ, Պէրոյթ, 2003, էջ 163–174, տե՛ս նաև՝ Проблема канонического в армянском духовном песнетворчестве. – «Калофония», вып. 2. Львов, 2004, с. 56–60; Мартирология и гимнография: загадка Четвертого побочного гласа армянского Октоиха. – «Гимнология», вып. 5. М., 2005, с. 124–132; ԹՅ՝՝՝՝ A. Arevchatsian. Hagio-graphie et hymnographie: le mystere de Darcvack' du Quatrieme mode plagal d'Octoechos armenien, "Revue des Etudes Armeniennes", t. 30. Paris, 2005–2007, p. 411–418.

Մագիստրոսն»<sup>2</sup>, իսկ Ստեփանոս Չիզ Ջուդայեցին կրկնում է նրան. «Գրիգոր Մագիստրն զԸստ պատկերին»<sup>3</sup>: Այնուհետև Հակոբ Սսեցին է հաղորդում շարականագիրներին նվիրված իր չափածո քերտվածում. «Խաչ կենարքն՝ Մագիստրոս, Ջորս ըստ պատկերն նորա ի հոս»<sup>4</sup>, իսկ Անանունի ցուցակում կարդում ենք. «զՋորս ըստ պատկերին Մագիստրոսի է ասացեալ, զոր այլք Իսահակայ Ջորափորեցոյ տան»<sup>5</sup>: Հովհաննես Վանականն իր «Հարցմունք և պատասխանիք» ձեռնարկում անդրադարձել է այդ շարականին առանձին պարբերությամբ, այսպես. «Հարց. Ջորս ըստ պատկերին [ո՞] ստեղծեր: Պատասխան. Մագիստրոս Գրիգոր Դարուն եկեղեցի է շինել և ծախիւք պատկեր բերել և անդ եղեալ. և զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմ: Եւ Թումա պատմագիրն յիշել է զեկեղեցին: Տէր Վահրամ կաթողիկոս որդի է նմա»<sup>6</sup>:

Չնայած դրան, շարականագիտության մեջ շրջանառվել է նաև այլ տեսակետ, ըստ որի, տվյալ շարականի հեղինակը ոչ թե Գրիգոր Մագիստրոսն է, այլ Է դարի իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունին<sup>7</sup>: Այս խնդրին տարիներ առաջ անդրադարձել ենք առանձին հոդվածով, որի մեջ համոզեցուցիչ փաստարկներ ենք բերել այդ շարականի հեղինակային պատկանելիության վերաբերյալ, հոգուտ՝ Մագիստրոսի, ներկայացնելով նաև Ամենափրկիչ կոչվող բյուզանդական հրաշագործ սրբապատկերի Հայաստան փոխադրելու պատմությունը, ինչպես նաև՝ Հավուց Թառի վանական համալիրի վերակառուցման, վերանորոգ եկեղեցու ճակատային մասում Գրիգոր Մագիստրոսի տեղադրած արձանագրության և եկեղեցու նավակատիքի առիթով խնդրո առարկա շարականի հորինման հանգամանքը, բերելով տվյալ եկեղեցու հայտնի արձանագրության մեկնաբանման հարցին նվիրված պատմիչների և բանասեր-հայագետներ՝ Կարապետ Կոստանյանցի, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցի և այլոց աշխատությունների քննական տեսությունը<sup>8</sup>:

Շարականագիրների միջնադարյան ցուցակներում ուշադրություն է գրավում Անանունի ցուցակի այն հատվածը, որտեղ «Ջորս ըստ պատկերի Քում» շարականից բացի, Մագիստրոսին է վերագրվում նաև Խաչի նավակատյաց Դօրվա «Խաչն կենարար» շարականը<sup>9</sup>: Այդ վկայությունը հաստատվում է ձեռագրական մի շարք տվյալներով:

Շարականագիրների ցուցակների հանդեպ ունեցած վստահությունը (նաև այլ առիթներով արդարացված)՝ մղեց մեզ նոր պրպտումների, որոնց նպատակն

<sup>2</sup> Տե՛ս շ. Ա ն ա ս յ ա ն. Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LXVII:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ LXXI:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ LXXIV:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ LXVIII:

<sup>6</sup> Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 5611, ԺԳ դար, էջ 111բ:

<sup>7</sup> Այս տեսակետը պաշտպանել են, օրինակ, Կ. Կոստանյանցը (Հին Յիշատակը. «Արարատ», 1897, էջ 289-343), Գ. Հ ա կ ո բ յ ա ն ը (Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, V-XV դդ., Երևան, 1980, էջ 203) և Ն. Թահմիզյանը (Ներսես Ծնորդալին՝ երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 20, նաև՝ Ոսկեփորիկ, Հայ երգի գոհարներ, Երևան, 1982, էջ 24 և 33):

<sup>8</sup> Տե՛ս մեր հոդվածը՝ Ո՞վ է <Ջորս ըստ պատկերին Քում> շարականի հեղինակը. «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 106-115:

<sup>9</sup> Տե՛ս շ. Ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ LXVIII:

էր Շարակնոցում տեղ գտած Մագիստրոսի կանոնականացված կամ պարականոն երգասացությունների որոնումը այլ ձեռագրական աղբյուրներում: Այսպես, հայր Միքայել Չամչյանը, ձեռքի տակ ունենալով Հովհաննես Վանականի «Հարցմունք և պատասխանիք» ձեռնարկի մեկ այլ ձեռագրական տարբերակ, մեջբերել է Գրիգոր Մագիստրոսին վերաբերվող հատվածը՝ հավելյալ տեղեկություններով համալրված, որոնք համաձայնեցվում են մեզ ծանոթ ուրիշ աղբյուրի հետ: Չամչյանի տեսադաշտում եղած ձեռագիրը Մագիստրոսին է վերագրում Խաչի նավակատյաց Ե օրվա կանոնի տեր երկնիցը ևս, այսպես. «... շարական Ջորս ըստ պատկերի քում. և գտեր երկնիցն. Որ զարդարեաց»<sup>10</sup>: Բացի Վանական Վարդապետի բերած խոսույն վկայությունից, որը մինչև այժմ վրիպել է երաժշտագետների ուշադրությունից, մեզ հաջողվեց հավելյալ մատենագրական տվյալներ հայտնաբերել, որոնք թեև նույնպես հրատարակված էին, սակայն աննկատ էին մնացել: Օրինակ, Զմմառի վանքի Մատենադարանի թիվ 71 Շարակնոցն ուշագրավ է շարականների հեղինակներին վերաբերող իր լուսանցագրերով: Այստեղ Խաչի նավակատյաց Ե օրվա կանոնի դիմաց նշված է. «Խաչի նաւակատեաց Ե աւուրն հարց՝ Այսօր պայծառ և սին լուսոյ - զհարցս իւր սարաւքն Մագիստրոս ի պատիւ Դարունից եկեղեցւոյ»<sup>11</sup>: Արդյոք ի նչ նկատի ունեն միջնադարյան գրիչը «իւր սարաւքն» ասելով: Խաչի նավակատյաց Ե օրվա կանոնի կազմը հետևյալն է. Օրհնութիւն - Չափաւոր - ծանր. «Ուրախ լեր սուրբ եկեղեցի»: Է դարի կաթողիկոս Սահակ Չորափորեցուն վերագրվող հայտնի շարականն է: Կանոնի հաջորդ մասերը, ըստ վերոհիշյալ ձեռագրի, ընծայում են Գրիգոր Մագիստրոսին նաև հարցը - Ծանր. «Այսօր պայծառ և սին լուսոյ» (5 տուն), ողորմեան - միջակ-չափաւոր. «Ջորս ըստ պատկերի Քում» (4 տուն), տէր երկնիցը - միջակ-չափաւոր. «Որ զարդարեաց մեծապայծառ փառաւք» (3 տուն): Այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում անանուն իւրագրության շարականագիրների ցուցակի «Ջոր այլք Իսահակայ Չորափորեցւոյ տան» արտահայտությունը:

Պակաս ուշագրավ չէ Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի թիվ 202, 1312 թվականի Շարակնոցը, որը հնագույնն է տվյալ հավաքածուում և օժտված է «ամեն շարականի հեղինակաց անուններով»<sup>12</sup>: Այստեղ կարդում ենք. «Կանովն սրբոյ Խաչին Դ աւուրն. Խաչին կենարար որ եղև մեզ փրկութիւն՝ Գրիգորի Մագիստրոսի ասացեալ»: Մեր կարծիքով, «Խաչն կենարար» շարականի հետ կապված պնդումը կարելի է կատարել նաև Մագիստրոսի «Ներբողեան ի Սուրբ Խաչն Քրիստոսընկալ» և «Յաղագս խաչանման գավազանին»<sup>13</sup> քերթվածների բովանդակությունն ու ոճական առանձնահատկությունները նկատի ունենալով, ինչը մինչ այժմ անտեսվել է ուսումնասիրողների կողմից: Հետևաբար, շարականագիրների

<sup>10</sup> Մ. Չ ա մ Վ է ա ն. Պատմութիւն Հայոց, հ. Բ, Երևան, 1984, էջ 1032:

<sup>11</sup> Տե՛ս Մ. Վրդ. Ք է շ ի շ է ա ն. Յուցակ Ձեռագրաց Զմմառու Վանուց, Վիեննա, 1964, էջ 113–115:

<sup>12</sup> Տե՛ս Յ. Տ ա շ է ա ն. Մայր Յուցակ Հայերէն Ձերագրաց Մատենադարանի Մխիթարեան, հ. Ա, Վիեննա, 1895, էջ 523–524:

<sup>13</sup> Տե՛ս Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլավունուոյ, Վենետիկ, 1868, էջ 80–92:

ցուցակներում, որոնք որոշակի իմաստով նույնպես կանոնական մի վավերագիր-հիշատակարան էին ներկայացնում, Մագիստրոսի անվան հիշատակությունը սխալմունք չէ: Նա հանդես է գալիս որպես առնվազն հինգ շարականի հեղինակ՝ ներկայացնելով Անիի մշակութային մթնոլորտին պատկանող շարականագիրների շրջանակը: Ինչ վերաբերում է Գրիգոր Մագիստրոսի անունով գրչագիր Գանձարաններում պահպանված տաղերին, ապա այստեղ նշելի է Հովհաննես Մկրտչին նվիրված «Կարապետ սուրբ հաւատող» տաղը, որն օժտված է «ԿԱՐԱՊԵՏԻՆ ՏԱՂ» ակրոստիքոսով: Ինչպես ենթադրում է Չաւյանը, հիմնվելով Արիստակես Լաստիվերցու, Ներսես Շնորհալու և Վարդան Արնելցու հաղորդած տեղեկությունների վրա, տաղը, հավանաբար, հորինվել է սուրբ Կարապետի զանգակատան կառուցման առիթով<sup>14</sup>: Մեզ ծանոթ գրչագրերից երեքի մեջ հեղինակի մասին կան շատ որոշակի ցուցումներ, այսպես. «Տաղ Յոհանու ի Գրիգորէ Մագիստրոսէ»<sup>15</sup>, «Տաղ ի Մագիստրոս իշխանէ և պարօն Գրիգորէ»<sup>16</sup> և «Տաղ ի Մագիստրոսէ»<sup>17</sup> ձևերով: Ցավոք, տաղերի երաժշտական՝ մեղեդիական բաղադրիչը գանձարանային բազմաթիվ այլ երաժշտաբանաստեղծական միավորների նման չի պահպանվել:

Վերջերս մեզ վիճակվեց ի հայտ բերել Մագիստրոսի անունով պահպանված ևս մեկ տաղ, որը ժամանակին իր «Նուագարան երաժշտական» վերնագիրը կրող տաղարանում զետեղել էր Գրիգոր Գապասակայանը<sup>18</sup>: Դա «Կանայք ումանք եկին՝ ի մեծ Զատկին» սկզբնատողով օժտված Հարության տաղն է, որը Գապասակայանը, ամենայն հավանականությամբ, ընդօրինակել է միջնադարյան խազագիր մի Գանձարանից կամ Տաղարանից: «Նուագարան երաժշտական»-ում տաղը բերված է հետևյալ խորագրով. «Տաղ Յարութեան՝ ի Գրիգոր Մագիստրոսէ»: Քերթվածն ունի երեք տուն և գրված է խառը տաղաչափությամբ (6+4), (4+6), (4+4), (4+4), (4+4): Երեք տեղ առանձին վանկերի վրա (ՄարիԱմ, ՍողովմԵի, դըրացԻք) կան խազեր:

Այսպիսով, ներկայումս Գրիգոր Մագիստրոսի՝ որպես շարականագրի և տաղասացի մասին մեր պատկերացումները գնալով հստակվում են, ավելին՝ նաև ընդլայնվում, հավաստելով, որ Մագիստրոսը, որն իր ժամանակի ամենաուսյալ և բազմակողմանիորեն զարգացած մտավորականներից էր, եղել է ոչ միայն պետական-քաղաքական գործիչ, գիտնական, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ և բանաստեղծ, այլ նաև տաղանդավոր երաժիշտներգահան: Այդ մասին են վկայում Շարակնոցում զետեղված և եկեղեցու կողմից կանոնականացված նրա հինգ շարականները, որոնք ներկայացնում են Գրիգոր Մագիստրոսի ներդրումը ազգային շարականերգության մեջ:

<sup>14</sup> Այդ մասին տե՛ս մեր հոդվածը՝ Անիի երաժշտական մշակոյթը և նրա հետ կապուած շարականագիրները. – <Բազմավեպ>, 1995, էջ 209:

<sup>15</sup> ՄՄ, ձեռ. 8088, 1480 թ., էջ 240ա:

<sup>16</sup> ՄՄ, ձեռ. 474, 1474 թ., էջ 213ա:

<sup>17</sup> ՄՄ, ձեռ. 423, 1742 թ., էջ 171բ:

<sup>18</sup> Տե՛ս Գրիգորի Գապասակայանի Գիրք Երաժշտական, Յորում Պարունակին Հայերէն, Յունարէն և Պարսկերէն Հարցմունք և Պատասխանատուութիւնք Յամառօտարար. – տե՛ս գրքի երկրորդ մասը՝ <Նուագարան Երաժշտական>, Կոստանդնուպոլիս, 1803, էջ 58:

Նրա շարականների երաժշտական վերլուծությունը բացահայտում է Մագիստրոսի՝ իրեն նախորդող շրջանի հոգևոր երգարվեստի հիանալի իմացությունը, աստվածաբանության, աստվածաշնչական պոետիկայի, զուտ բանաստեղծական, տաղաչափական հնարանքների, ինչպես նաև՝ հոգևոր երգարվեստի տեսական և գործնական ոլորտների կատարյալ տիրապետումը: Ուստի, միանգամայն հասկանալի է Մագիստրոսի նամակներում և «Մեկնութիւն քերականի»-ում այդքան լայն ու նախանձախնդիր անդրադարձը իր ժամանակի՝ ինչպես հոգևոր, այնպես էլ՝ աշխարհիկ երաժշտարվեստի, նաև հետավոր անցյալի, հատկապես, հելլենական երաժշտական մշակույթի այլնայլ հարցերին ու կողմերին:

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոս-երգահանի վաստակն առայժմ ներկայանում է հետևյալ տեսքով.

*Կանոն Խաչի նաւակատեաց Ե աւուրն.*

ԳԶ

*Հարց - Ծանր. «Այսօր պայծառ և սիւն լուսոյ»*

*Ողորմեա - Չափաւոր. «Ձորս ըստ պատկերի Քում»*

*Տէր երկնից - Միջակ-Չափաւոր. «Որ զարդարեաց մեծապայծառ փառայք»*

*Մանկունք - Չափաւոր. «Այսօր ուրախացեալ ցնծան երկնից»*

*Կանոն Խաչի նաւակատեաց Դ աւուրն.*

ԲԿ

*Օրհնութիւն Ա. - Չափաւոր. «Խաչն կենարար որ եղև մեզ փրկութիւն»:*

*Բսկ տաղային ստեղծագործություններից նշելի են՝*

*Տաղ Յոհանու ի Գրիգորէ Մագիստրոսէ. «Կարապետ սուրբ հաւատոյ».*

*Տաղ Յարութեան՝ ի Գրիգոր Մագիստրոսէ. «Կանայք ոմանք եկին ի մեծ Զատկին»:*

Այսպիսով, յոթ միավոր՝ հինգ շարական և երկու տաղ, ինչն ամեննին էլ քիչ չէ, եթե նկատի ունենանք, որ Շարակնոցում կան մեկական շարականով ներկայացված նշանավոր հեղինակներ, ինչպիսիք են, օրինակ, իշխանուհի Խոսրովիդուխտ Գողթնեցին՝ «Ձարմանալի է ինձ», Մոկսի եպիսկոպոս Ստեփանոս Ապարանցին՝ «Սրբութիւն Սրբոց», կաթողիկոս Սարգիս Ա. Սևանեցին՝ «Մարսափելի որոտմամբ», Հակոբ վարդապետ Սանահնեցին՝ «Յանսկզբնական ծոցոյ հօր»<sup>19</sup>, Կիրակոս Երզնկացին՝ «Արևելք գերարփի»<sup>20</sup> շարականներով և այլն:

<sup>19</sup> Ստեփանոս Ապարանցու, Սարգիս Սևանեցու և Հակոբ Սանահնեցու շարականները օժտված են անվանական ակրոստիքոսներով: Նշված հեղինակների մասին տե՛ս մեր հոդվածը՝ Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապուած շարականագիրները, էջ 210–215:

<sup>20</sup> Տե՛ս Շարական, Վաղարշապատ, 1876, էջ 1071–1074: Շարականը օժտված է այբբենական ակրոստիքոսով:

Գրիգոր Մագիստրոսի գիտական լայն ընդգրկումների մասին են վկայում նրա գեղագիտական հայացքներն ու երաժշտաբանաստեղծական ժանրերին վերաբերող ասույթները, որոնք առանձին հետաքրքրություն են ներկայացնում<sup>21</sup>: Մագիստրոսի գեղագիտական հայացքները գրավել են դեռևս Նիկողայոս Ադոնցի ուշադրությունը<sup>22</sup> և դա լիովին արդարացված է, որովհետև իր Նամականիում և «Մեկնութիւն քերականի» երկասիրության մեջ Գրիգոր Մագիստրոսը հանդես է գալիս իբրև հին և նոր (իբրև ժամանակակից) երաժշտարվեստի խորաթափանց գիտակ, որն ունեցել է սեփական որոշակի դիրքորոշում և գործուն վերաբերմունք իր ժամանակի մտավորականներին հուզող գեղարվեստական կյանքի մի շարք հրատապ հարցերի հանդեպ:

Բերենք Մագիստրոսի Նամականիում և «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ արտահայտված մի քանի ուշագրավ ասույթներ, փորձելով նաև մեկնաբանել դրանք: Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսի լեզուն և ոճը բարդ է, խրթին, հաճախ պաճուճագարդ, ինչը և դժվարացնում է, մասնավորապես, նրա Նամականիի թարգմանությունը: Մենք հիմնվել ենք վերջին հրապարակումների վրա, ձգտելով հնարավորինս ճշգրտել (իսկ որոշ դեպքերում ուղղել) թարգմանության մեջ տեղ գտած անճշտությունները<sup>23</sup>:

Պետրոս Գետադարձ կաթողիկոսին գրած նամակներից մեկում (Թ), անդրադառնալով վերջինիս խաչանման գավազանին նվիրված ներբողին (հագներգությանը), Մագիստրոսը գրել է.

«Հագներգութիւնս այս ոչ ըստ որում հագներգութիւն է մասն քերթածոց ներտառեալ ստորոգութեամբ, և ոգեալ է հագներգութիւն ի հագնելոյ կարկատուն բան, և կամ ի սարդենի մահակէ, պարտ գոլով երգել զհումերական քերթուածսն. այլ տաղ է հումերական քաջ ոլորեալ. և սա տաղ դիւցազնական չափաբերեալ ըստ Ելլենացոցն»<sup>24</sup>: (...) «Իսկ շարակայեցեալն եթէ քերթողապէս ոք նկատեսցէ, ի քառից տասանց չափաբերեալ գտցի (...): Քանզի ի թուականութենէ, և յերաժշտականութենէ, և յերկրաչափութենէ շարաբարձեալ յինքեան ունի»<sup>25</sup>:

<sup>21</sup> Այդ մասին տե՛ս, օրինակ, «М узыкальная эстетика стран Востока» под общей редакцией В. П. Шестакова. М., 1967, раздел «Армения», вступительная статья и составление С. Аревшатына и Н. Тагмизяна, с. 358–359; Հ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Երաժշտությունը V–XV դարերի հայ մատենագրության մեջ, Երևան, 2010, էջ 61–64, 143–147, Ա. Ա ր և շ ա տ յ ա ն. Անիի դերը հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության պատմության մեջ.– Միջազգային գիտաժողով՝ «Անիի միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15–17 նոյեմբերի, Զեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջ 366–377, Ա. Հ ա յ ր ա պ է տ յ ա ն, Հ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Գրիգոր Մագիստրոսը և Անիի երաժշտական մշակույթը. տե՛ս նախորդ ժողովածուն, էջ 378–383:

<sup>22</sup> Տե՛ս Н. А д о н ц. Дионисий Фракийский и армянские толкователи. Пг., 1915, с. 204.

<sup>23</sup> Մեջբերումների թարգմանությունը Հ. Հարությունյանի. տե՛ս Երաժշտությունը V–XV դարերի հայ մատենագրության մեջ, Հավելված (այսուհետ՝ Հավելված):

<sup>24</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թղթերը (այսուհետ՝ Թղթեր), բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով ի լոյս ընծայեց Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 33:

<sup>25</sup> Նույն տեղում:

«Այս հագներգությունը նման չէ բանաստեղծական ստորագրությամբ հորինվածքի, ինչպես հագներգության, որը կազմված է կարկատված խոսքերից և կամ դափնե գավազանով երգվող հոմերական մի քերթվածքի, այլ մի տաղ է հոմերական՝ քաջ ոլորված (հմտորեն չափված): Մա դյուցազներգական մի տաղ է, հորինված հելլենացիների չափով»: (...) «Իսկ եթե շարակցությունները դիտենք բանաստեղծական արվեստի տեսանկյունից, ապա կգտնենք քառասուն ոտք (...), քանզի թվաբանությունից, երաժշտությունից, երկրաչափությունից և աստղաբաշխությունից է շարաբանյալ»<sup>26</sup>:

Կամ Հովհաննես Մյունյաց արքեպիսկոպոսին՝ իր հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու մահվան առիթով ուղղած նամակում, որն անկեղծ կսկիծով և ափսոսանքով լի դամբանական մի ողբ է հռետորական փայլուն ոճով գրված, կարդում ենք հետևյալը. «Եւ զի նչ արդեօք. մի թէ դորա ողբս առից, զի գարժանապէսն արձակեցից ձայն դամբանական և ողբերգական, կամ ներբողականս նմանապէս գերեզմանական բանաստեղծութիւնս»<sup>27</sup>: «Եվ ի նչ է այդ. մի թէ դրա վրա այդպիսի ողբ կասեն, քանզի արժանապէս արձակելու են դամբանական և ողբերգական ձայներ, կամ հատկապէս ներբողական գերեզմանական բանաստեղծություն»<sup>28</sup>:

Վահրամ Պահլավունու մահվան նվիրված հանդիսությունների նկարագրության մեջ ասվում է. «...որ և նոցա իսկ զքոյդ հանդիսի մրցութիւն տաղս և սոինչս յօրինեալ անպատկառաբար ազատագունդն պարէին և ի հրապարակս գռեհից և քաղաքաց իբրու գդիցազանցն երգէին»<sup>29</sup>: «... որ և քո հանդեսների մրցությունների ժամանակ տաղեր և սոինչներ հորինելով ազատների խմբերն էին պարում և քաղաքների հրապարակներում ու փողոցներում իբրև դյուցազներգություն էին երգում»<sup>30</sup>:

Նույն թղթում, դարձյալ Վահրամ Պահլավունու մասին կարդում ենք. «Քեզ այդպէս վայելէր թագաւոր և յայսպիսի պաղատան ճեմել, (...) այսպիսի փողհարօք և թմբկոք ճոխանալ»<sup>31</sup>: «Քեզ վայելում էր թագավորի նման այսպիսի պաղատում ճեմել, (...) այսպիսի փողհարներով և թմբուկներով ճոխանալ»: Նույնի մահվանն անդրադառնալիս, Մագիստրոսը շարունակել է. «Եւ զի ոչ էր պարտ զարիական արութեան քո և զգօրութեան յոյս քաջութեան հիքից և կանանց ողբերգականս ոգել, մերով իսկ արական և բնական իմաստասիրական երգով զքոյդ ներբողական և գերեզմանական պարել ողբս, և զորդիութեան և զսննդեան հատուցանել պարտս»<sup>32</sup>: «Եվ պատշաճ չէր քո արիությանն ու զորությանը քաջության թշվառ ապավիճություն և կանանց ողբերգություններ ոգել, (այլ) մեր իսկ արական և բնական իմաստասիրական երգով քեզ ներբողական և գերեզմանական

<sup>26</sup> Հավելված, էջ 143, 143–144:

<sup>27</sup> Թղթեր, էջ 36:

<sup>28</sup> Տե՛ս Հավելված, էջ 144:

<sup>29</sup> Թղթեր, էջ 40:

<sup>30</sup> Հավելված, էջ 144:

<sup>31</sup> Թղթեր, էջ 41:

<sup>32</sup> Նույն տեղում:

ողբեր խմբապետել և որդիական և (հոգևոր) սննդի պարտքերը հատուցել»<sup>33</sup>:

Նամակներում կա նաև արքեպիսկոպոսին ուղղված մի ուղերձ, որտեղ Գրիգոր Մագիստրոսը վրդովմունք է արտահայտում թաղման արարողությունների ժամանակ հեթանոսական ծեսերի վերապրուկների դրսևորման կապակցությամբ. «Աւա՛ղ բախտին և այն այրպիսի վայրս և յիւրն սեփականի, բայց և զկնի այնր շռայլութիւն շուայտացեալ թշնամացն իսաչին Քրիստոսի որ գերեզման թլփացեալ. զի նչ ձև զմայլական արառաբար կաքաւողացն ինջիւնս և սրնջան և ոտիք թափառումն, և դաստակօք անյօրինաբար բաղբախումն, և քարշումն քղանցից մրկեալ պտուտելով զփոշի կնքելոյ գերեզմանին, թէպետն ոչ ըստ օրինի քրիստոսական կրօնից»<sup>34</sup>: «Ավա ղ բախտին, այն էլ հենց այս՝ սեփական վայրում: Բայց կանցնի Քրիստոսի իսաչի թշնամիների, գերեզմանը թլպատողների շվայտ շռայլությունը: Ի՞նչ է նշանակում զմայլական պարերի մեջ կաքավողների խնջույքը, սոինչները, ոտքերի դոփյունը և դաստակների անարվեստ բախբախումները, քղանցքների քարշումների մրկացած պտույտներից առաջացած փոշին, որ թափվում էր գերեզմանին, ինչը քրիստոնեական կրոնի օրենքներին անհարիր է»<sup>35</sup>: Իսկ Մարգիս վարդապետին ուղղված նամակում, քրիստոնեության մասին, գրում է. «Արդ յայսմ վայրի բաւական լիցի սասացեալն յայրի անդ մինչև ի ցվախճան և այն զտեառնէ իւր և զարքայէ. սակայն ինձ սպասեցին արդարքն մինչև եկեսցէ: Չայսպիսի ինձ բանս դիւրացուցանող է և զօրացուցանող միշտ զաստուածայինս երգել երգս որպէս երկիր անապատ և անջուր կամ որպէս եղջերու զի փափագէ աղբերս ջուրց...»<sup>36</sup>: «Արդ, ասվածը բավարար չէ մինչև մարդու վախճանի, նրա տիրոջ և արքայի մասին խոսելիս, սակայն ինձ սպասեցին արդարները, մինչ վերադարձս: Այս խոսքերն ինձ թեթևացնում են և մշտապես զորացնում է աստվածային երգերի կատարումը, ինչպես անապատ և անջուր երկիր, ինչպես եղջերու, որ փափագում է աղբյուրի ջրին...»<sup>37</sup>:

ԻՇ թղթում դրսևորվում է Մագիստրոսի՝ հոգատար մանկավարժ և ուսուցիչ լինելու հանգամանքը: Հավանաբար, իրեն աշակերտած հայր Կարապետին գրած այս նամակում, կարդում ենք. «Իսկ եթէ կամիս յօժարութեամբ բացատրեցից քեզ զիրողութիւն ենթակային, եթէ որպէս զքառիցն ի նա սոգորս երևակայութեամբ ցուցից զթուականութեանն, զերաժշտականութեանն, զերկրաչափութեանն, զաստեղաբաշխութեանն և զիւր գործառնութեանցն բաղազանութիւն»<sup>38</sup>: «Իսկ եթե կամենում ես՝ հոժարությամբ քեզ կբացատրեմ (դասավանդվող) առարկայի բովանդակությունը, թե ինչպիսին են նրա չորս բաղադրամասերի՝ թվաբանության, երաժշտության,

<sup>33</sup> Հավելված, էջ 144:

<sup>34</sup> Թղթեր, էջ 47:

<sup>35</sup> Հավելված, էջ 144:

<sup>36</sup> Թղթեր, էջ 54:

<sup>37</sup> Հավելված, էջ 144–145:

<sup>38</sup> Թղթեր, էջ 72:



երկրաչափության, աստղաբաշխության և իր կիրառության հարաբերությունները»<sup>39</sup>:

Գրիգոր Մագիստրոսի մտերիմ բարեկամներից է եղել Դանիել երաժիշտը, որի երաժշտական տաղանդը բարձր գնահատելով, Մագիստրոսն անվանել է նրան «նոր Օրփիլևս»: Դա նշանակում է, որ վերջինս եղել է ոչ միայն երևելի հորինող, այլ նաև երգեցող: Դանիել երաժշտին ուղղված նամակներից մեկում (ՄԳ) Մագիստրոսը վերապատմում է երաժշտության ներագդեցությանը վերաբերող հունական մի առասպել. «(...) Պոոփյուռիփոնոսն ի Պելոպպե հանդիսացեալ ընդ հաւս ի գարնանային յեղանակին փողէր և ի փողսն սրնգէր, իսկ լեզուովն ճռուողէր յոգնաբեղուն բաղդատական տրոհմամբ գիրաքանչիւրոյն յատուկ ըստ տեսակի: Չսա ասեն եռասեռեան և բազմայատուկ և անհատական: Եռասեռեան իբրու գմարդ բանական և զձայնս հաւուց բարբառեալ ըստ իւրաքանչիւր սեռի. նաև պատկանեալ քատակէր իւրաքանչիւրոցն ձայն ըստ տեսակի յատուկ: Պոոփիւռիփոնոսն երբեմն երթեալ յԱրգիացիսն, տաղն Որփեայ գառաջինն սկսեալ, մերկ երգով ձեղուն յարկին պատառէր և ոստք սեանն ծաղկեալ բողբոջէին և զհաւս ի վերայ կացեալ տեսանէին Արգիացիքն...»<sup>40</sup>: «(Մի անգամ) գարնանային եղանակին Պոոփյուռիփոնոսը Պելոպպեից, հանդես գալով թռչունների հետ, փող էր նվագում, սրինգ էր փողում, իսկ լեզվով ճռվողում էր բազմապիսի նմանողական զանազանությամբ, յուրաքանչյուրին հատուկ եղանակով: Այս (երգեցողությունը), ասում են, (բաղկացած է) երեք սեռից և բազմահատուկ է և անհատական: Երեք սեռից, որովհետև իբրև բանական մարդ՝ արտաբերելով թռչունների ձայները ըստ յուրաքանչյուրի սեռի, նաև ընդօրինակում էր յուրաքանչյուրի ձայնը նրանց պատկանող հատուկ տեսակի համաձայն: Մրա մասին ասվում է, թե Պոոփյուռիփոնոսը, երբեմն գնալով Արգիացիների մոտ, առաջինը Օրփեոսի տաղն էր սկսում (երգել), լոկ երգով ձեղնահարկն էր պատռում, և սյան ոստերը բողբոջելով ծաղկում էին, և Արգիացիները տեսնում էին թռչուններին, որոնք նստած էին նրանց վրա»<sup>41</sup>: Հասկանալի է, որ խոսքն այստեղ հին հունական երաժշտական գեղագիտության մեջ մշակված երաժշտական էթոսի ուսմունքի՝ նաև միմեզիսի տեսության մասին է, իսկ բերված առասպելը ոմն Պոոփյուռիփոնոս երաժշտի մասին կոչված է ցուցանելու այդ ուսմունքները կոնկրետ օրինակներով:

Անանիա վարդապետին ուղղած նամակներից մեկում (ՄԲ) Մագիստրոսն անդրադառնում է մեկ այլ հունական առասպելի՝ դարձյալ երաժշտությանն առնչվող, որը պատմում է, թե ինչպես Արտեմիդե աստվածուհին ծովի ալիքներից փրկում է Պարմինիդի չքնադագեղ և հրաշատեսիլ մանկանը, որին «հրամայէր ապրեցուցանել ոչ միայն, այլ և շնորհս տալ քահանայության: Եւ վարժեալ նորա ամենայն իմաստութեամբ, իսկ երաժշտականութեամբ առաւել ծայրագոյն: (...) Չորոյ և պատկերն անդրի արարեալ ի պղնձոյ և օծեալ ոսկւով փող ի բերանն ունի և ծիրանի բեհեզ փողեալ ի ծայրս փողին: Չայտսիկ նկարագրությամբ զնա դրոշմել պարտ վարկան (...),

<sup>39</sup> Հավելված, էջ 145:

<sup>40</sup> Թղթեր, էջ 125:

<sup>41</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

որ նախուստ գրեցաք Պոռփիլոսիփոնին զսա սալպիփոնիս այսինքն քնարերգ»<sup>42</sup>: «... հրամայեց ոչ միայն ապրեցնել, այլ նաև շնորհել քահանայություն: Եւ սովորեցնելով նրան բոլոր գիտությունները, ամենաշատը երաժշտության մեջ (հմտացրեց): Որի և պատկերն է այնտեղ ստեղծված՝ փողը բերանին և փողի ծայրից ծփացող ծիրանի բեհեզով, (որը պատրաստված է) պղնձից և ոսկիով է պատված: Այսպիսի նկարագրությամբ պատշաճ համարեցինք նրան հիշատակել (...), ինչպես նախկինում գրեցինք Պոռփիլոսիփոնի մասին «սալպիփոնիս», այսինքն՝ քնարերգու»<sup>43</sup>: Նամակն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Այստքիկ բանք առականք իմաստասիրեալ ի մէնջ հռետորական յաղագս երաժշտիդ Դանիէլի»: Այսինքն՝ «Մա է առասպելի իմաստը, որ հռետորական (ոճով) իմաստասիրեցինք քո Դանիէլ երաժշտի համար»:

Գրիգոր Մոկացի եպիսկոպոսին գրած թղթերից մեկում (ԼԳ) Գրիգոր Մագիստրոսը մեջբերում է մահամերձ Արտաշես Պարթև թագավորի հմայախոսքը կամ ողբը, որը հայ մատենագրության մեջ պահպանվել է հենց Մագիստրոսի մեջբերման շնորհիվ՝ Մովսես Խորենացու «Պատմության» մեջ վերաշարադրված կամ մեջբերված հայ հին հեթանոսական վիպերգերի և Վահագնի ծննդին նվիրված օրհներգի պես. «... ի Թորգոմեան երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց Ահկեան: Որում Արտաշէսն Պարթև բաղձայր մլոյ մրրկեալ ծխոյ շամանդադեալ մակաւսասար շինից և քաղաքաց: Ո՞ տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի, զվագելն եղանց եւ զվագելն եղջերուաց. մէք փող հարուաք եւ թըմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց: Եւ զայս ասեն ի վախճանէլն իւրում, զոր և ի գռեհիկս աւանդեալ գտաք»<sup>44</sup>: «Այնժամ թորգոմյաններից տարեցը դրեց երեք եռանկյունիներ միմյանց վրա, որոնց մեջ Արտաշես Պարթևը կախարդում էր ծխով, որը մոլից քուլա-քուլա բարձրանում էր և մշուշով պատում շենքի ներսն ու քաղաքը.

Ո՞ տայր ինձ, ասում էր, զծուխ ծխանի  
 Եւ զառաւօտն Նաւասարդի,  
 Ըզվագելն եղանց  
 Եւ զվարգելն եղջերուաց.  
 Մէք փող հարուաք  
 Եւ թըմբկի հարկանէաք,  
 Որպէս օրէն է թագաւորաց:

... Եւ այս ասում են, (նա ասում էր) իր վախճանի պահին, ինչը գտանք հասարակ մարդկանցից ավանդված»<sup>45</sup>:

Ցավոք, սույն հատվածի թարգմանության մեջ տեսնում ենք անճշտություններ և բացթողումներ: Թերևս խառնաշփոթը տեղի է ունեցել այն պատճառով, որ զանց է արվել նախորդող հատվածը. «Ուրեմն նահանջեալ յԱմնոսէ, զՆիսեանն նշանակեալ ցուցակութիւն, երևակայէր, և այն ի կողմանէ տասնեկին եօթն անկեանցն յունականին թւոյ, կամ թէ ի թորգոմեան

<sup>42</sup> Թղթեր, էջ 124:

<sup>43</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>44</sup> Թղթեր, էջ 86-87:

<sup>45</sup> Հավելված, էջ 145:

երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց... «, որը պատմում է հույների մոտ ընդունված յոթ եռանկյունիների տասնյակ թվի հետ կապված մի ծեսի մասին, ինչը Գրիգոր Մագիստրոսը համեմատում է հայերի նման մի սովորույթի հետ<sup>46</sup>: Փորձենք հնարավորինս հարազատ մնալ բնագրին. «... կամ թե թորգոմյանների միմյանց վրա դիզվող եռակի բազմապատկած յոթ եռանկյունիներն Ահեկան ամսին, երբ Արտաշես Պարթևը տենչում էր մոլախոտից մրրկաձև բարձրացող ծուխը, որը հավասարապես մշուշով էր պատում շենքերը և քաղաքները»:

Մտտավոր է թարգմանված նաև հատվածի վերջին տողը, այնինչ բնագրում բառացիորեն ասված է հետևյալը. «... Եւ այս ասում են իր վախճանի մասին, ինչը գտանք հասարակ մարդկանցից ավանդված»:

Նամակներից մեկում (Խ) Մագիստրոսը դիմում է Գագիկ Բագրատունի թագավորին հետևյալ խոսքերով. «... ասել քեզ Փոլումեոս ոչ դանդաղիմ (...): Ջի տեսանեմք զքեզ ի հուներական տաղսն վերտառեալ չափաբերական և ոտանաւորս հագներգական կարկատեալ»<sup>47</sup>: «Շտապում եմ քեզ, պատմել Պտղոմեոսի մասին (...): Որպեսզի քեզ տեսնենք հուներական տաղերը չափաբերված վերտառելով և հագներգական ոտանավորը կարկատելով»<sup>48</sup>:

Հագներգությանը (ռապսոդիային) վերաբերող «կարկտիք», «կարկատել» բնորոշումները հայտնի են դեռևս Դավիթ Քերականի և Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն քերականի» աշխատություններից, ինչը նշանակում է բազմամաս, տարբեր պատկերներից և դրվագներից բաղկացած մի երաժշտաբանաստեղծական ստեղծագործություն, որը նմանեցվում է գույնզգույն կտորներից կազմված գործվածքի<sup>49</sup>:

Բարսեղ և Եղիսե աշակերտներին ուղղած թղթում նա արժարծում է Արիստոտելի աշխատությունների որոշ հարցերը, փաստորեն շարադրելով կրթական սեփական ծրագիրը, որտեղ երաժշտությունն (ըստ յոթ ազատ արվեստների համակարգի) ունեցել է իր կայուն տեղը. «Նախ պարտ է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակստացականութեամբ, և զկնի այսր զհռետորականն երիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ, և ապա գսահմանցն պարունակել, և պղատոնական և արիստոտելական, և դարձեալ պիթագորական կարականակերտութեանն բացորոշմանց և դատողութեանց. նախուստ քան զայստսիկ կրթեցելովք նեկուտ վերձանութեամբ զհին և զնոր կտակարանս, և առասպելավարժութիւնս ի բազում և զանազան տեղիս զեղեալ գորքանութեամբ արտայայտել հաւանիմք, և ի խոյզ ելանել ջերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և տրամաբանական հատուածոց հոմերական և պղատոնական նախասականին և այլոցն բոլոր արհեստից և մատենից: Ջի յամենայնի իմաստասէրն խոստովան լիցի զգիտութիւն և ուրացեալ անգիտութիւն մանաւանդ ըստ կարողութեան քառիցն արհեստից՝ թուական, երաժշտական,

<sup>46</sup> Թղթեր, էջ 86:

<sup>47</sup> Թղթեր, էջ 97:

<sup>48</sup> Հավելված, էջ 145:

<sup>49</sup> Հագներգության մասին մանրամասն տե՛ս Հ. Հո վ հ ա ն և ի ս յ ա ն. Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 99–103:

երկրաչափական, աստեղաբաշխական»<sup>50</sup>: «Նախ պետք է քերականությունը թարգմանությամբ հանդերձ ուսանել կատարելապես՝ մտքերի մաքրությամբ, և դրանից հետո հռետորական արվեստը՝ երեք քննությունների անսխալ որոշմամբ, և ապա և պլատոնական, և արիստոտելյան սահմանումներն ամփոփել, և դարձյալ՝ պյութագորյան բոլորակության բացահայտությունները և դատողությունները: Դրանցից առաջ հավանություն ենք տալիս կրթվողներին (ուսուցանել) հին և նոր կտակարանները՝ անդադար ընթերցանությամբ, և առասպելավարժությունը՝ բազմաթիվ և զանազան տեղերում եղած քանակությամբ արտահայտելու կարողությամբ, և ջերմագույն և ողջամիտ ուշիմությամբ հոմերական և պլատոնական նախաբանի տրամաբանական հատվածներին և մյուս բոլոր արվեստներին և մատյաններին հետախույզ լինել: Որովհետև ցանկացած իմաստասեր խոստովանում է գիտությամբ և ուրանում անգիտությամբ, մանավանդ՝ ըստ կարողության թվաբանական, երաժշտական, երկրաչափական, աստղաբաշխական չորս արվեստների»<sup>51</sup>:

Ուշագրավ է Մանահնի միաբաններին ուղղված նամակը (ԿԱ), որը ներկայացնում է վարդապետարանում տիրող բարձր ոգեղեն մթնոլորտը. «Յիշելով գլայրական ծերոցի ծայրագունից խնամս առ մեզ և խրատ և ողորմությամբ բարեկարգութիւնս, և զերիտասարդացն, որք ի վարժարանսն, հռետորական և երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանդէս և զմրցումն և զգեղեցիկ մոլութիւնս և զմանկանցն սաղմոսերգութիւնս քաղցրաձայնութեամբ վերառեցեալ, որ գրէթէ պետութեանցն և բոլորն երկնային դասու և զօրութեանց գերակատար գտեալք և ոմանց զանազան և պէսպէս առաքինութեամբ և ճգնութեամբ սքանչելի և զարմանալի երևեալ, որ և ոչ ի Սկիւթ կամ ի Թերալիդ այսպիսի երբեմն երևեալ»<sup>52</sup>: «(Մյս ամենի հետ) հիշում եմ նաև ձեր՝ մեծամեծ ծերերիդ հոգածությունը (մեր մասին) և խրատները ու ողորմաձությամբ բարեկարգությունները, (հիշում եմ նաև) երիտասարդներին, որոնք վարժարաններում հռետորական և երաժշտական մտքովդ անցած հանդես ու մրցություն և գեղեցիկ մոլություններ էին կազմակերպում, մանուկների քաղցրաձայնությամբ հնչող սաղմոսերգությունները, որոնք հրեշտակներին և բոլոր երկնային դասերին և ուժերին գրեթե գերազանցող եմ գտնում, իսկ ոմանց՝ զանազան և պէսպէս առաքինություններով և ճգնությամբ (համարում եմ) սքանչելի և զարմանալի երևացող, որ ոչ սկյութների մոտ և ոչ Թերեում երբևէ չեն երևացել»<sup>53</sup>:

Թվում է, թե «ի Սկիւթ կամ ի Թերալիդ այսպիսի երբեմն երևեալ» արտահայտությունը սխալ է թարգմանված: Մեր կարծիքով, պետք է լինի՝ « որ անգամ Սկյութում կամ Թերալիդում երբեմն են երևում»: Մագիստրոսն այստեղ ոչ թե հեթանոս սկյութներին է (скифы) նկատի ունեցել (այդ դեպքում պետք է լիներ «ի Սկիւթս»), այլ ինչ-որ հայտնի մենաստան, անապատ (скит, пустынь), ինչը հաստատվում է հաջորդիվ քրիստոնեության առաջին դարերում եգիպտական անապատում գտնվող և իր

<sup>50</sup> Թղթեր, էջ 105:

<sup>51</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>52</sup> Թղթեր, էջ 136-137:

<sup>53</sup> Տե՛ս Հավելված, էջ 146:

ճգնավորներով հռչակված Թերաիդի մենաստանի (այլ ոչ թե Թերե քաղաքի) հիշատակմամբ:

Նույն նամակում, հավանաբար, պատասխանելով Սանահնի միաբանների հետաքրքրասիրությանը, Գրիգոր Մագիստրոսն անդրադարձել է նաև Անիի հոգևոր մթնոլորտին, գրելով. «Ըսկ զի նչ արուեստ և կարգաւորութիւն մայրաքաղաքիդ. ուղղափառ վարդապետութիւն ի զիշերի և ի տուրնջեան և այն ոչ սուտ կամ սնտոիպատիր և տատիկեցի առասպելօք, այլ աստուածեղէն արդեամբք և զօրութեամբ և քաղցրաձայնութեամբ երաժշտականանաց և նուագումն սաղմոսելոյ և ընթերցումն հարցն վարուց և հակառակել զգեղեցիկ հակառակութիւնս և զմիմեամբք ելանել»<sup>54</sup>: «Ըսկ ի նչ արվեստ և կարգավորություն է (տիրում) ձեր մայրաքաղաքում: Ուղղափառ վարդապետություն՝ զիշերվա և ցերեկվա ընթացքում և այն էլ՝ ոչ սուտ կամ սնտոիպատում և տատիկներին (վայել) առասպելներով, այլ աստվածեղեն աշխատանքով և զորությամբ և երաժշտական քաղցրաձայնությամբ և սաղմոսելու երգեցողությամբ և (սուրբ) հայրերի վարքերի ընթերցումով և գեղեցիկ բանավեճերում միմյանց հանդեպ հակառակությամբ ելնելով»<sup>55</sup>:

Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսն անզիջում պայքար է մղել աղանդավորների, մասնավորապես, թոնդրակեցիների դեմ: Այդ պայքարի անմիջական անդրադարձն ենք գտնում ԿԷ թղթում. «Գրեալ են եթէ վասն նախանձու արտաքսեն զմեզ. ո՞ ստույթեանդ մանաւանդ եթէ զարմացման և սքանչացման արժանի. եթէ ի մէնջ են և մերովս դաւանութեամբ, զ ինչ արդեոք պարտ է նախանձել, ընդ որո՞յ ճեմարանի կամ վարդապետութեան, ընդ որո՞յ մայրաքաղաքացեաց և եպիսկոպոսաց և հարանց (...) և խաչակրօն կրօնաւորաց, եթէ միայնաւորաց քրիստոսագգեաց և ճգնագգեաց արանց, որք ի լերինս յարս և ի փապարս բնակեալ են, եթէ յերաժշտական հագներգութիւնսն և ի քաղցրաձայնութիւնսն, եթէ ի զամպարափայլ կացարդական տօնախմբութիւնսն...»<sup>56</sup>: «Գրել են, թէ նախանձից են արտաքսել մեզ: Ո՛ ստությունդ, մանավանդ, որ արժանի է զարմացման և սքանչացման: Եթէ մեզանից են և մեր դավանության, արդյոք ի՞նչ պետք է նախանձել, ո՞ր ճեմարանի կամ վարդապետության համար, որ մայրաքաղաքացիների և եպիսկոպոսների և հայրերի (...) և խաչակրոն կրոնավորների համար, թէ քրիստոսագգյաց միայնավորների և ճգնագգյաց մարդկանց, որոնք բնակվում են լեռների քարայրներում և կիրճերում, թէ՞ երաժշտական հագներգություններին և քաղցրաձայնություններին, թէ լուսափայլ կացուրդական տոնախմբություններին...»<sup>57</sup>:

Բնորոշ և հատկանշական է Անիի հանդեսներից մեկի նկարագրությունը, որը, շարադրված լինելով Մագիստրոսին հատուկ վերամբարձ և խրթին լեզվով, դժվարություններ է հարուցում համարժեք թարգմանության համար, ինչը և բազում մեկնաբանությունների և տարբերակումների տեղիք է տվել: Ահա այդ հատվածը. «Բայց ասեմ զՌոստումեանն տնկոյ,

<sup>54</sup> Թղթեր, էջ 137:

<sup>55</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>56</sup> Թղթեր, էջ 155–156:

<sup>57</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

գորմէ ասէն յոստոցն հաստեալ գործէին զնա մանրագոյն քնարս, զորս եղեալ ի ձեռնին համբակացն և առժամայն ուսեալք անաշխատաբար որպէս ի սարդենի մահակէ պար գոլով երգէին զհումերական քերթուածսն»<sup>58</sup>: «Բայց (նկատի ունեմ) Ռոստոմյան տունկը, որի մասին ասում են, թէ ճյուղերը կտրելով գործում էին մանրագոյն քնարներ, որոնք տալով համբակների և այդ պահին անաշխատաբար (նվագել տվածների ձեռքը), որոնք դափնե ճյուղով պար գալով երգում էին տաղաչափական քերթվածքներ»<sup>59</sup>:

Ինչպէս տեսնում ենք, թարգմանիչները սովյալ պարբերության մեջ թույլ են տվել թարգմանական մի քանի անճշտություններ: Առաջարկում ենք թարգմանության մեր տարբերակը. «Բայց (նկատի ունեմ) Ռոստոմյան տունկը, որի մասին ասում են, թէ ճյուղերը կտրելով սարքում էին նրբագոյն քնարներ, որոնք տալիս էին համբակների ձեռքը. և այդ պահին չգրադված ուսայլները դափնե գավազանով պարում էին՝ երգելով հումերական քերթվածքներ»:

Եվ նորից գալով Անիի հանդեսներին՝ Գրիգոր Մագիստրոսը իշխան Թոռնիկ Մամիկոնյանին ուղղած նամակում (ՀԵ) տալիս է դրանցից մեկի գեղեցիկ նկարագրությունը. «Քաջ գիտեմք, զի հոյք ի հանդիսի հզորք և փառացի և փարթամք, և վիճակելոց դասք ոսկէհոռ զարդիք պարածածկեալք, սպիտակափառ և երաժշտական պարք գումարեալք դաստակերտացն տնօրէնութեամբ, և ոտիւք կաքաւեալք, և հնչմանց երգ արտակիտեալ և փողեալ քնարական ներդաշնակապէս. քանզի և այս ինքեանց սեպհական և հարազատապէս ի Թրակիայ երևեալ զհիտ մանաւանդ ի յատտանցն ներքինեաց մաքրագոյն և վճիտ քնագարդութիւն և բացագանչութիւն պատկանեալ և յարմարեալ ձայնի»<sup>60</sup>: «Քաջ գիտեմք, որ (կան) հանդեսներում հզորների, փառավորների և փարթամների խումբը, և վիճակավորների ոսկեհյուս զարդերով ծածկված դասը, դաստակերտներում անօրինաբար սպիտակափառ և երաժշտական պարեր գումարած (մարդկանց խումբը), և ոտքերով կաքավողները, և դրսում հնչեցնող երգողները, և շեփորվող ներդաշնակ մեղեդիները, որովհետև սրանք ինքնին սեփականված են, (կարծում ենք), թրակացիներից, հատկապէս (դա)ցածր դասի մարդկանց է պատկանելիս եղել, որոնք մաքրագոյն և վճիտ (երգը) քթի տակ (կատարվող) բացականչությունների ձևով կամ հարմարեցված ձայնով են կատարել»<sup>61</sup>: Այս պարբերության թարգմանության մեջ նույնպէս կան անճշտություններ, ընդ որում հենց երաժշտական, կատարողական հասկացություններին վերաբերող, օրինակ. «ի (...) ներքինեաց մաքրագոյն և վճիտ քնագարդութիւն և բացագանչութիւն պատկանեալ և յարմարեալ ձայնի» նախադասությունը, որը թարգմանել ենք հետևյալ կերպ. «այն հատուկ է պատկանավոր և հարմարեցված ձայնեղանակով ներքինների մաքրագոյն և վճիտ և երդաշնակ երգեցողությանը և բացականչությանը»: Այսինքն, խոսքն այստեղ կատարատների երգեցողության մասին է, որը

<sup>58</sup> Թղթեր, էջ 221:

<sup>59</sup> Տե՛ս Հավելված, էջ 146:

<sup>60</sup> Թղթեր, էջ 222–223:

<sup>61</sup> Հավելված, էջ 147:

հայտնի է եղել Հայաստանում Բյուզանդիայից, իսկ Գրիգոր Մագիստրոսը, որպես բյուզանդական հոգևոր երգարվեստին և արքունիքի երաժշտական կյանքին քաջատեղյակ և գեղարվեստի հանդեպ զգայուն անձնավորություն, անդրադարձել է այդ երևույթին, հավաստելով, որ այն առկա է եղել նաև Անիում:

Գրիգոր Մագիստրոսի ուշադրությունից չի վրիպել նաև գուսանական արվեստը, որն Անիում, ինչպես վկայում են պատմական աղբյուրները, ծաղկում է ապրել: Այսպես, «Մեկնություն քերականի» աշխատության մեջ Մագիստրոսը հաստատել է, որ «կարկատուն բանիք յարամանին շարամանեալ ամենայն մրմունջք և երգք գուսանութեան (...) գոր այժմ ի հայումս առավել քան ի յունականին գտանեմք»<sup>62</sup>: Այսինքն՝ «Կարկատուն խոսքերով հարմարեցնում են շարելով բոլոր մրմունջները և գուսանական երգերը, որոնք ներկայումս հայերի մոտ առավել տարածված ենք գտնում, քան հույների»<sup>63</sup>:

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը ներկայանում է ոչ միայն իբրև Անիի թագավորության շրջանում ձևավորված նոր տիպի երևելի գիտնական և արվեստագետ, որի վաստակն ու ներդրումը, մասնավորապես, ազգային երաժշտական մշակույթի մեջ դժվար է գերազնահատել և, որը իր նկատելի հետքն է թողել ոչ միայն որպես շարականագիր և տաղասաց, երաժշտության գեղագետ, այլ նաև հեղինակ, որն իր Նամականիում անգնահատելի վկայություն է թողել իրեն ժամանակակից երաժշտական կյանքի և մտավորականությանը հուզող այլևայլ հրատապ՝ գեղագիտական բնույթ կրող հարցերի վերաբերյալ:

Գրիգոր Մագիստրոսի Նամականին և «Մեկնություն քերականին» երկը լիովին պատկերացում են տալիս նրա գեղագիտական հայացքների մասին և ներկայացնում Մագիստրոսին որպես իր ժամանակի հանրագիտակ ու առաջադեմ մտածող:

## МУЗЫКАЛЬНОЕ НАСЛЕДИЕ ГРИГОРА МАГИСТРОСА

АННА АРЕВШАТЯН

Резюме

Григор Магистрос (990–1058) – один из блестящих представителей интеллектуальной элиты времен Анийского царства, наследие которого продолжает привлекать ученых. Исследование его музыкального наследия и рукописных источников выявило, что кроме указанного в средневековых списках авторов шараканов гимна Григора Магистроса «Ты, который создал по подобию Своему» из канона Пятого дня на Воздвижение Креста, в настоящее время можно добавить еще три шаракана из того же канона и один – из канона Четвертого дня того же праздника. В рукописных Гандзаранах (сборниках праздничных песнопений)

<sup>62</sup> Տե՛ս Н. А до н ц., Նշվ. աշխ., էջ 231–232:

<sup>63</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

приводятся также два тага Григора Магистроса, посвященные памяти Иоанна Крестителя и Пасхе. Отдельный интерес представляют нашедшие место в Эпистолярной Григора Магистроса эстетические воззрения и высказывания, касающиеся музыкально-художественной жизни его времени. Анализ фрагментов Эпистолярия, относящихся к музыкальному искусству, уточненный перевод трудноинтерпретируемых фрагментов в полной мере выявляют музыкально-эстетические взгляды Григора Магистроса.

## THE MUSICAL HERITAGE OF GRIGOR MAGISTROS

*ANNA AREVSHATYAN*

### S u m m a r y

Grigor Magistros (990–1058) is one the brilliant representatives of the intellectual elite of Ani kingdom. His large heritage continues to attract the scholars. The investigation of his musical heritage and medieval manuscripts clarified that to the hymn by Grigor Magistros from the canon of the Fifth day of St. Cross's Elevation denoted in the medieval lists of hymnographers, in the present is possible to apply three hymns from the even canon and one from the canon of the Fourth day. In the chant collections named Gandzaran we find two taghs by Grigor Magistros dedicated to the memory of John the Baptist and the Easter. Particular interest represent the aesthetic views of Grigor Magistros and his expressions concerning the artistic life of his time. The analysis of some fragments concerning the musical art from the Epistolary of Grigor Magistros, and the precise variant of translation of the hard interpreted fragments explain entirely the musical aesthetic views of Grigor Magistros.